

**Շահառուների խորհրդի երկրորդ կազմի արտագնա հանդիպում  
Հաշվետվություն**

*«Կեչառիս» հյուրանոցային համալիր, Ծաղկաձոր  
Նոյեմբերի 21-22, 2008*

<b>Ընդհանուր նկարագիր</b>	<p>Ս/թ նոյեմբերի 21-22-ին ք. Ծաղկաձորում անցկացվեց Շահառուների խորհրդի /ՇԽ/ երրորդ կազմի արտագնա աշխատանքային հանդիպումը՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակազմի, Հազարամյակի մարտահրավեր կորպորացիա /ՀՄԿ/ Հայաստանի ծրագրի տնօրենի և մի շարք հյուրեր մասնակցությամբ: Ծրագրային պատասխանատուները հանդես եկան ելույթներով, ծավալվեց ակտիվ քննարկում և առաջ քաշվեցին համատեղ աշխատանքների կազմակերպման հնարավորությունները:</p> <p>ՇԽ անդամները գումարեցին նիստ՝ հստակեցնելու ՇԽ Կանոնակարգը, ինչպես նաև մի շարք այլ աշխատանքային փաստաթղթեր:</p>
<b>Հանդիպման նպատակները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ՇԽ նոր անդամներին ներկայացնել ՀՄՀ-Հայաստան ծրագիրը, ինչպես նաև ծրագրի առաջընթացը և գրանցված արդյունքները</li> <li>• կազմակերպել համատեղ աշխատանքային հանդիպում ՀՄՀ-Հայաստան ծրագրի աշխատակիցների և Շահառուների խորհրդի անդամների մասնակցությամբ</li> <li>• քննարկել և հաստատել ՇԽ աշխատանքային փաստաթղթերը՝ ՇԽ կանոնակարգը, աշխատանքային պլանը և այլն</li> <li>• հստակեցնել հետագա համատեղ աշխատանքների կազմակերպման և իրականացման ձևերը և մեխանիզմները:</li> </ul>
<b>Հանդիպման հիմնական թեմաները</b>	<p>1. Օր 1-ին՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի և ծրագրային բաղադրիչների ներկայացում և քննարկում</p> <p>2. Օր 2-րդ՝ Շահառուների խորհրդի գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերի քննարկում:</p>
<b>Հաշվետվությանը կցվող փաստաթղթեր</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Օրակարգ</li> <li>2. Մասնակիցների ցանկ</li> <li>3. ՇԽ նոյեմբերի 22-ի նիստի արձանագրություն</li> <li>4. Ծրագրային ներկայացումներ</li> <li>5. Միջոցառման բյուջե</li> </ol>

## **Հանդիպման առաջին մասի ամփոփում**

Բացման խոսքով հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանը: Նա շնորհակալություն հայտնեց հանդիպման մասնակիցներին, խոսեց միջոցառման նպատակների և կարևորության մասին:

### **1. Ողջույնի խոսք և ներկայացում՝ ՇԽ դերի և մասնակցության վերաբերյալ**

*Ալեքս Ռ-ասին, Հայաստանի ծրագրի տնօրեն, ՀՄԿ*

ՀՄԿ Հայաստանի ծրագրի տնօրենը ներկայացրեց ծրագրի պայմանականության, քաղաքական պատասխանատվության կոմպոնենտը և Հայաստանի 2009թ. ցուցանիշների աղյուսակը: Ա. Ռ-ասինը խոսեց ՇԽ դերի և գործունեության շրջանակների մասին:

ՇԽ անդամներին հետաքրքրում էր ցուցանիշների աղյուսակում տեղ գտած գնահատականները, դրանց բացատրությունը:

ՇԽ անդամ Լիլիթ Ասատրյանի հարցը վերաբերում էր Հայաստանի ցուցանիշների համեմատականին մինչ ծրագրի մեկնարկը և դրանից հետո: Ալեքս Ռ-ասինը պարզաբանեց, որ գրանցված վատթարացումը կապված է համաշխարհային տնտեսական ցուցանիշներով Հայաստանի դասակարգման բարձրացման հետ, այսինքն, մինչ ծրագրի մեկնարկը միջինից ցածր եկամուտ ունեցող երկրի դասից Հայաստանը տեղափոխվել է միջին եկամուտ ունեցող երկրների շարքը:

### **2. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ներկայացում՝ կառուցվածք, կառավարման համակարգ, ֆինանսական և ադմինիստրատիվ հարցեր**

*Արա Հովսեփյան, Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան*

Արա Հովսեփյանի ելույթի առանցքում ընկած էին հետևյալ հիմնական հարցադրումները՝

- ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջարկի ներկայացման նախապատմությունը, հիմնական ցուցանիշները և բաղադրիչները
- Ծրագրի կառավարման համակարգը և ՊՈԱԿ-ի կառուցվածքը
- Ֆինանսական և ադմինիստրատիվ հարցեր

### **3. Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ներկայացում**

*Տիգրան Քալանթարյան, Ոռոգման ծրագրի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան*

Ոռոգման ծրագրի ղեկավարը ներկայացրեց ծրագրի նախնական և վերանայված արդյունքները, նախատեսված աշխատանքները և վերագնահատման արժեքը:

ՇԽ անդամ Ա. Վերանյանի հարցը վերաբերում էր համաֆինասավորման այլ աղբյուրների ներգրավված հնարավորություններին և համագործակցությանը՝ ծրագրի լայն ծավալների ընդգրկման նկատառումով:

ՇԽ անդամները խրախուսեցին գիտելիքների և տեղեկատվական հենքի ներդրման, տեղերում միջազգային փորձի կուտակման գաղափարը:

### **4. Ջրից դեպի շուկա բաղադրիչի ներկայացում**

*Անահիտ Պետրոսյան, Ջրից դեպի շուկա ծրագրի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան*

«Ձրից դեպի շուկա» բաղադրիչի ղեկավար Անահիտ Պետրոսյանը ներկայացրեց ծրագրի նպատակները, հիմնական գործողությունները, դրանց շրջանում ունեցած առաջընթացը: Կարևոր շեշտադրում արվեց նոր մեկնարկած Կառուցվածքային ամրապնդում ենթածրագրի վրա, որի հիմնական նպատակներն են՝

1. Հգորացնել ՋՕԸ-ները
2. Հստակեցնել ՋՕԸ-ների և ՋՄԳ-ների պարտականությունները
3. Ստեղծել ՋՕԸ-ների ֆեդերացիաներ, ՋՕԸ-ների ասոցիացիաներ
4. Մշակել օրենք ոռոգման մասին

ՇԽ անդամների հարցերը հիմնականում վերաբերում էին ծրագրի վարկային բաղադրիչին, դրա արդյունավետությանը, բանկերի ընտրության արդյունավետ մեխանիզմների կիրառմանը և այլն:

ՇԽ անդամ Լիլիթ Ասատրյանը խնդրեց ՇԽ անդամներին տրամադրել ծրագրի իրականացման համայնքների և տեղամասերի ցուցակները:

**5. Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի ներկայացում**  
*Հակոբ Պետրոսյան, Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան*

Ծրագրի առանձնահատկություններն ավելի հասկանալի դարձնելու նպատակով գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի ղեկավարը ներկայացրեց Հայաստանի ճանապարհային ուղիների դասակարգումը, դրանց ներկա վիճակը և ՀՄՀ-Հայաստանի ծրագրում ընդգրկվելու նախապայմանները:

ՇԽ-ի կողմից կարևորվեց ծրագրի շրջանակներում վերանորոգվելիք ճանապարհների պահպանման և շահագործման հարցերը:

ՇԽ անդամ Պ. Շահինյանը կարևորեց ճանապարհների անվտանգ երթևեկության կանոնների պահպանման խնդիրը և խրախուսեց ՀՄՀ-Հայաստանի համապատասխան մասնագետներին աշխատանք իրականացնել ճանապարհային նշանների տեղադրման, դրանց լուսավորման գործում համապատասխան միջազգային ցուցանիշների: Առաջարկություն եղավ այլ դոնորների ներգրավմամբ կրթական միջոցառումների իրականացման վերաբերյալ:

**6. Մոնիտորինգի և գնահատման պլանի ներկայացում**  
*Լուսինե Խառատյան, Մոնիտորինգի և գնահատման մասնագետ, ՀՄՀ-Հայաստան*

Հանդիպմանը բազմիցս նշվել էր մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի դերը ծրագրի արդյունավետության և հետագայում մնան ծրագրերի ազդեցությունը գնահատելու տեսանկյունից: Լուսինե Խառատյանը խոսեց ՀՄՀ-Հայաստանի կողմից կիրառվող մոնիտորինգային մեխանիզմների մասին, ներկայացվեցին առաջին արդյունքները:

ՇԽ անդամներին հետաքրքրում էր, թե արդյոք աշխատանք էր իրականացվում տեղերում, իրական շահառուների հետ՝ մոնիտորինգային արդյունքների հավաստիություն ասպահովելու նպատակով, ինչը բաղադրիչի պատասխանատուները հաստատեցին:

**7. Բնապահպանական և սոցիալական հարցերի ներկայացում**  
*Արմինե Միմոնյան, Բնապահպանության և սոցիալական ազդեցության ղեկավար, ՀՄՀ-Հայաստան*

Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացման մյուս ամենակարևոր բաղադրիչներից է: Բաղադրիչի ղեկավար Արմինե Միմոնյանը պարզաբանեց աշխատանքների իրականացման մեխանիզմները, իրականացնող կազմակերպություններին, յուրաքանչյուր առանձին ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունները և պատասխանեց ՇԽ անդամներին հուզող հարցերին:

## **8. Գնումների գործընթացի և իրավական հարցերի ներկայացում**

*Գոհար Մուսայեյան, Գնումների մասնագետ, ՀՄՀ-Հայաստան*

Գնումների մասնագետը մանրամասն բացատրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի գնումների կազմակերպման առանձնահատկությունները, ներկայացրեց ծրագրի շրջանակներում գնումների գործակալ հանդիսացող մարմինները, կիրառվող գործընթացը, ՀՄԿ-ի, Կառավարման խորհրդի և քաղաքացիական հասարակության դերը: Գնումների գործընթացն առավել թափանցիկ և արդարացի կազմակերպումն ապահովելուն նպատակով Համաձայնագիրը, ինչպես նաև այլ հարակից փաստաթղթեր, ինչպես օրինակ գնումների Համաձայնագիրը սահմանում են ակնհայտ և պոտենցիալ շահերի բախման հնարավորությունները՝ նման դեպքերից խուսափելու նպատակով:

## **9. Հասարակայնության հետ կապեր**

*Նանե Աճեմյան, Մամլո քարտուղար*

Մամլո քարտուղարը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստանի հասարակայնության հետ կապերի աշխատանքի հիմնական միջոցները՝ առանձնացնելով ՇԽ անդամների դերը և մինչ այժմ իրականացրած աշխատանքներն այդ ուղղությամբ:

ՇԽ անդամները հանդես եկան մի շարք առաջարկություններով և նախաձեռնություններով՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով, մասնավորապես ՇԽ անդամ Ս. Համբարձումյանն առաջարկեց սեմինար կազմակերպել ՁԼՄ ներկայացուցիչների հետ, Հայաստանում ամենամեծ սփռումն ունեցող հեռուստաընկերության՝ Հ1-ի հետ համագործակցություն և այլն:

## **Առաջին օրվա աշխատանքների ամփոփում, նախապատրաստում երկրորդ օրվան**

Ժամանակի սղության պատճառով որոշվեց օրակարգի նախավերջին հարցը՝ ՇԽ անդամների անհատական ներկայացումները՝ ՇԽ անդամի դերը և հնարավոր ներդրումը ՀՄՀ-Հայաստան ծրագրին առաջիկա մեկ տարվա ընթացքում, տեղափոխել հաջորդ օրը:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյանն ամփոփեց առաջին օրվա աշխատանքները՝

ա. ՇԽ անդամներին ներկայացվեցին ծրագրի բոլոր բաղադրիչները և առաջընթացը

բ. գրանցվեցին մի շարք առաջարկություններ համատեղ աշխատանքներն առավել արդյունավետ իրականացման համար

գ. քննարկվեցին մի շարք կարևոր խնդիրներ:

Նշվեց, որ վաղը տեղի կունենա ՇԽ նիստ:

## Հանդիպման երկրորդ մասի ամփոփում

ՇԽ անդամները գումարեցին հերթական 5-րդ նիստը. նիստի արձանագրությունը կցվում է:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. ՇԽ հասարակայնության հետ աշխատանքների գրաֆիկի հաստատում
2. ՇԽ Կանոնակարգի նախագծի ներկայացում և հաստատում
3. ՇԽ աշխատանքային պլանի վերջնական նախագծի ներկայացում և հաստատում
4. ՇԽ անդամի դերը և հնարավոր ներդրումը ՀՄՀ-Հայաստան ծրագրին առաջիկա մեկ տարվա ընթացքում
5. Այլ հարցեր

## Օրակարգի 1-ին հարց

ՇԽ հասարակայնության հետ կապերի հանձնաժողովը ներկայացրեց հասարակայնության հետ կապերի հետ աշխատանքի հետևյալ կետերը՝

- ՇԽ նախագահողի դերը ՁԼՄ-ների հետ աշխատանքների համակարգման գործում.
- ՇԽ անդամների դերը մարզային բնակչության իրազեկման գործում /ամենօրյա աշխատանք, կայք, հատուկ ծրագրեր/.
- Վերապատրաստողական համագործակցություն ՁԼՄ-ների հետ.
- ՇԽ անդամ կազմակերպությունների մասին տեղեկատվություն.
- ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրականացրած ծրագրերից ֆիլմի պատրաստում /2-3/, տեղադրում mca.am կայքում.
- Հղում ՇԽ անդամ կազմակերպությունների կայքերում.
- Արտագնա մամուլի ասուլիս այնպիսի վայրում, որտեղ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը իրականացրել է ծրագիր.
- Ընդլայնված հանդիպում քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչների հետ, որոնց քվեի շնորհիվ մենք ընդգրկվել ենք ՇԽ կազմում.
- Հատուկ ծրագրի առաջարկ  
ՀՄՀ-Հայաստան ծրագրի դերը Հայաստանի Եվրոպական Համամերձեցման գործում, կոնֆերանս, համագործակցություն ԵՄ կառույցների հետ:

Հնչեցին մի շարք առաջարկություններ՝ մարզերում ՀՄՀ-Հայաստան ծրագրի գործողությունների մասին տեղեկատվության տարածման և համապատասխանաբար դրանց արդյունավետության բարձրացման նպատակով:

Արդյունքում, որոշվեց ի գիտություն ընդունել հանձնախմբի կողմից մշակված միջոցառումների ցանկը, կազմել դրանից բխող հստակ գործողությունների պլան, առանձնացնել թիրախ խմբերը և պատասխանատուները, սահմանել հստակ ժամկետներ: Հանձնարարականի կատարման ժամկետ նշվեց սահմանել մինչև դեկտեմբերի 15-ը:

## **Օրակարգի 2-րդ հարց**

ՇԽ անդամները մանրամասն քննարկեցին ՇԽ վերանայված կանոնակարգի բոլոր կետերը, փորձ արվեց գտնել փոխզիջում յուրաքանչյուր բարձրացված հարցի շուրջ: Արդյունքում, քվեարկության դրվեց կանոնակարգային յուրաքանչյուր գլուխ, իսկ վերջում կանոնակարգն ամբողջությամբ:

Նոր կանոնակարգով ՇԽ անդամները հույս ունեն բարձրացել աշխատանքների արդյունավետությունը, ծրագրային ներգրավվածությունը, ինչպես նաև պահպանել որոշումների կայացման արդարությունը և թափանցիկությունը:

Ժամանակի սղության պատճառով որոշվեց նիստի մնացած հարցերը տեղափոխել ՇԽ առաջիկա նիստի օրակարգ:

Վերջում, ՇԽ անդամները շնորհակալություն հայտնեցին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին արդյունավետ և հետաքրքիր հանդիպում կազմակերպելու համար: